

ՄԵՆԲ ՄԻԱՍԻՆ ՀԱՂԹԵՅԻՆԷ



Լուսանկարում. Մեծ հաղթանակի 65-ամյակի տոնակատարությանը մասնակցած թարժրաստիճան հյուրերը Կարմիր հրապարակում:



Լուսանկարում. Հայոց բանակի ստորաբաժանումը զինվորական շքերթում:

ՀՀ ԳԱՍ նախագահությունում Կրեդիտի Կոմիտեի «Вклад армянского народа в победу в Великой отечественной войне (1941-1945)» Գրքի շնորհանդեսը: Գրքի հեղինակներ, պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Զարությունյանը և Կրեմլի պատմության դոկտոր Յուրի Դոդոյանը գիտական և հետազոտական վիճաբանի աշխատանք են կատարել՝ ստեղծելու սույն հանրագիտարանային ուսումնասիրությունը:

Թերթում են այս գիրքը, և սիրտդ հպարտությամբ է համակվում Մեծ հայրենականում Խորհրդային Միության տարած փառապանծ հաղթանակում հայ ժողովրդի ծանրակշիռ ավանդի, կռվի դաշտում իրենց անօրինակ սխրանքով հերոսացած հայ զինվորի, փառաբանված զորավարների աստղաբույլի, երևելի հրամանատարների քաջության, ռազմական արվեստի փայլուն դրսևորումների համար:

Գրքի հեղինակները ստվարածավալ գործում սկզբից մինչև վերջ նորից ու նորից հռչակում և ապացուցում են, որ *Մեծ հայրենականը* մեր ժողովրդի հայրենական պատերազմն էր: Հայաստանից շատ-շատ հեռու՝ արևմտյան ռազմաճակատներում և ֆաշիստների կողմից օկուպացված երկրներում հայ զինվորը գիտակցում էր և գիտեր, որ կռվում է իր հողի համար, իր ժողովրդի փրկության և ազատության համար: Այստեղից են հայ զինվորի անձնագրի պիտանքն ու հերոսությունը, աստվածաժառնգ և անթաքույց վերծի նվիրական պորթկուլուն, որը կուտակվել էր այն ժամանակներում, երբ մարդակեր թուրքը մորթում էր

մի ողջ ժողովուրդ, և նույն
այդ գերմանացին սատարում
էր այդ ուճիրը: Զէ՞ որ ռազմա-
դաշտում կռվող հազար-հա-
զարավոր մարտիկներ և
հրաձգանատարներ եղեմնից
մազապուրծ և եղեմնին զոհ
գնացած հայերի որդիներն
էին և ժառանգները:

Ստվարածնվալ հանրագիտարանային այս ասքը բաղկացած է երկու մասից: Եթե առաջին բաժինը նվիրված է ռազմի դաշտում և թիկունքում հերոսացած մեր ժողովրդի զավակներին (Վլիմենտ Դարոթյունյան), ապա երկրորդ բաժինը նվիրված է մեր ժողովրդի այն ներկայացուցիչներին (պետական նշանավոր գործիչներ, ռազմարդյունաբերական ոլորտի տաղանդավոր և բացառիկ անհատներ), որոնք իրենց նվիրվածությամբ, փայլուն ընդունակություններով և ամենուրաջ հայրենասիրությամբ նշանակալի ավանդ ունեցան մեծ հաղթանակի կայացման գործում:

Այո, հայ ժողովուրդը հպարտանալու, իր զավակների սխրանքը ի լուր աշխարհի հայտարարելու իրավունք ունի: Եվ դրա հրաշալի վավերագիրն է սպասված այս ժանրակիզի ուսումնասիրությունը, որը լույս տեսավ Մեծ հաղթանակի 65-ամյակի նվաճողին:

Ահա այս մասին էր ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի բացման խոսքը: ՀՀ ԳԱԱ նախա-



գահը պատմեց, որ օրերս Սոսկվայում կայացած «Մենք միասին հաղթեցինք» գիտաժողովում ելույթ ունեցած Ռ-
լինսթոն Չերչիլի թոնոուհին՝ Մելիտա Սանդիստը ե-
րախտագիտություն հայտնեց խորհրդային նշանավոր
հետախույզ, մեր հայրենակից Գևորգ Վարդանյանին, ո-
րի շնորհիվ կանխվեց ֆաշիստների ծրագրած երեք տե-
րությունների ղեկավարներին ոչնչացնելու հրեշավոր
ծրագիրը, որի աղետալի հետևանքները դժվար չէ կան-
խատել:

Շնորհանդեսի ժամանակ ելույթ ունեցան և հեղինակներին դրվատանքի անկեղծ ու ջերմ խոսք փոխանցեցին ԴՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը, գեներալ Վլադիմիր Զայրապետյանը, Զանրապետության ազգային արխիվի տնօրեն Ամատունի Վիրաբյանը: Գրքի համահեղինակ, տնտեսագիտության դոկտոր Զրանտ Պողոսյանը անդրադարձավ այն հարցին, թե ինչու է կարևորել և գրքի երկրորդ բաժինը նվիրել պատերազմի տարիների հայ պետական գործիչներին, ռազմական արդյունաբերության ստեղծողներին և մեծահամբավ գիտնականներին, որոնք անուրանալի ավանդ ունեն հաղթանակի գործում: Ըստ Զրանտ Պողոսյանի, ինքը նպաստակահարմար է գտել այս գրքում պատմել պատերազմից հետո ու նաև այսօր գործող մեծանուն հայ գիտնականների մասին, որոնցով պետք է հպարտանա հայ ժողովուրդը:

Ինչպես գրքի վերնագիրն է հուշում, այն տպագրվել է ռուսերեն, և հեղինակները մտադիր են տպաքանակի մեծ մասը տարածել Ռուսաստանի Դաշնությունում: Դրա նպատակը և՛ բացատրելի է և՛ ճիշտ: Նախատեսվում է գրքի վերափոխարարականությունը՝ քերականորեն լրացումներով, որովհետև պատմությունը դեռևս թաքցնում է դեպքեր և դեմքեր, որոնց շարունակում են մնալ անհայտ էջ...

«ԵՍ ՀԱՅԱԳԵՏ ԵՄ ՄՐՏՈՎ»

Յստակին Դում-Թխագուրն արժանագրով Մ ԳԱԱ պատրվալիոր դոկրորի կոգման

Հայաստանի Հանրապետության Գի-
տությունների ազգային ակադեմիայի նա-
խագահ Ռադիկ Մարտիրոսյանը ակադե-
միայի պատվավոր ղեկավարի դիպլոմ հանձ-
նեց ավստրիացի հայտնի հայագետ, Ջյուջ-
բուրգի համալսարանի լեզվաբանության ֆա-
կուլտետի դասախոս և հայագիտական հե-
տևազոտությունների ամբիոնի վարիչ Յասմին
Դում-Թրազուտին:

Ռ. Մարտիրոսյանը նշեց, որ ակադեմիան բարձր է գնահատում հայագիտության բնագավառում ավանդ ունեցող մարդկանց ջանքերը: Նրա խոսքով, ակադեմիան պատրաստ է աջակցել Յ. Գում-ժրագուտին հայագիտության ասպարեզում հետազա գործունեության համար:

3. Դուռ-Թրազուտը շնորհակալություն հայտնեց կոչման համար՝ մշելով, որ իր համար մեծ պատիվ է մնալ գլխահատանքի արժանանալը: Նա մշեց, որ արդեն 22 տարի է՝ Հայաստանի հեռ գիտական կապեր ունի: Ներկայացնելով հայագիտության ասպարեզում իր անցած ուղին՝ Յ. Դուռ-Թրազուտը մշեց, որ իր նպատակն է աշխտացնել և զարգացնել հայագիտությունը գերմանախոս երկրներում:

«Ես հայազեա եմ ստով: Հայագիտութիւնն իմ կյանքի կոչումն է», - շեշտեց հայազեաը:

Յասմին Դում-Թրազդատի հետազոտությո-
ւումները նվիրված են ժամանակակից հայե-
րենի քերականությանը, հայ բաղբառագի-
տությանը, հայ գյուղատնտեսական տերմի-

նաբանությանը, հանրալեզվաբանությանը:

Նա կազմակերպել է հայագիտական 7 գիտաժողով: ԵՊՀ-ում ղեկավարել է դիպլոմային աշխատանքները, կազմակերպել հնագիտություն, ազգագրություն ուսումնասիրող ուսանողական խմբերի այցելությունը Հայաստան:

Հայսոցիստոքյան ողորտոմ 1999 թ. Յաւմին Դոմ-Թրսգոտին շնորիկէ է «Վիննա-յոմ Հայաստանի դէսպանատան պրտով-վոր մշակութային խորիքատոյ» կոյոմ:

Նա հայագիտության գծով հրատարակել է մի շարք գրքեր ու հոդվածներ: «Հայտնագործված Հայաստան» գիրքն ունեցել է 4 հրատարակություն: Նա հեղինակել է հայերենի դասագիրք, հայերենի քերականության վերաբերյալ մի ստվարածավալ տասնմասիչություն, գրարարից գերմաներեն է թարգմանել 13-րդ դարի «Բժշկարան ձիոյ» գիրքը: Այժմ Յասին Դում-Թրագումը գրարարից գերմաներեն է թարգմանում «Ախսարք» ժողովածուն:

Յասմին Դամ-Թրագուտը 1988-1990 թթ. առկորել է Երևանի պետական համալսարանում և ստացել դիպլոմներ հայերենի և հանրայնգվարանոթյան գծով: 1990-1998 թթ. աշխատել է Գրացի համալսարանում, 1998-2001 թ.՝ Ավստրիայի գիտությունների ակադեմիայում: 2002 թվականից Զալցբուրգի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչն է: 2003-ից Ինսբրուկի համալսարանի Արամուսումն հնագիտական պեղումների ծրագրի գիտական խորհրդատուն և մենեջերն է: Դասավանդել է Ավստրիայի մի քանի համալսարաններում, Մյունխենում, Երուսաղեմում, Միչիգանում, Երևանում: Հրավիրված դասախոսել է Լայպցիգի Մաքս Պլանկի անվան էվոլյուցիոն մաթրաբանության ինստիտուտում և Լեյդենի (Նիդերլանդներ) համալսարանի հայագիտության բաժնում:

**ՀՀ ԳԱՍ տեղեկատվական վերլուծա-
կան կենտրոն**

Ակադեմիկոս Գևորգ Ղարիբջանյանի հոբելյանը



ՀՀ ԳԱԱ նախագահությունում գեղեցիկ ավանդույթ է դարձել կյանքից հեռացած մեծավաստակ գիտնականների հոբելյանների հանդիսավոր մեծարումը: Մայիսի 14-ին ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում նշեցին մեծավաստակ պարմաբան, հասարակական-քաղաքական գործիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գևորգ Ղարիբջանյանի 90-ամյակը:

Հանդիսավոր միջոցառմանը մասնակցեցին ՀՀ ԳԱԱ ղեկավարությունը, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար Գեղամ Ղարիբջանյանը, ՀՀ ԱԺ պատգամավորներ, մտավորականության, հասարակական-քաղաքական շրջանակների ներկայացուցիչներ, ընտանիքի անդամներ:

Հոբելյանական նիստը բացեց ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս - քարտուղար Վլադիմիր Բարխուդարյանը և արժանվույն գնահատեց նշանավոր պատմաբանի, հասարակական-քաղաքական գործիչ, ազգային նկարագրի անվանի գիտնականի, ճշմարիտ հայի և հրաշալի մարդու՝ Գևորգ Ղարիբջանյանի կերպարը:

Գևորգ Ղարիբջանյանի կյանքի, քաղաքական, հասարակական, գիտական գործունեության մասին զեկուցեց պատմական գիտությունների դոկտոր Ստեփան Ստեփանյանը: Այնուհետև ելույթ ունեցան ու գնահատանքի ու մեծարման անկեղծ և սրտառու խոսքեր ասացին Սուրբաթ Սուրբաթյանը, Վլադիմիր Մովսիսյանը, Խաժակ Դրամիսյանը: ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար Գեղամ Ղարիբջանյանը և Գևորգ Ղարիբջանյանի որդին՝ Բագրատ Ղարիբջանյանը, շնորհակալություն հայտնեցին մասնակիցներին, ելույթ ունեցողներին ու ՀՀ ԳԱԱ նախագահությանը՝ սրտառու, ջերմ և հավուր պատշաճի մեծարման հանդեսի կազմակերպման համար:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Ղարիբջանյանը պարգևատրվել է 30 շքանշաններով ու մեդալներով: Նա «Ձորավար Անդրանիկ» Հայոց համագաղային միության պատվավոր նախագահն էր, ԽՍՀՄ և ՀՀ գրողների և ժուռնալիստների միության անդամ, ՀԽՍՀ 8-րդ եւ 9-րդ գումարումների Գերագույն խորհուրդների պատգամավոր, ՄԱԿ-ի միջազգային տեղեկատվական ակադեմիայի իսկական անդամ, Ստեփան Շահումյանի ան-



վան մրցանակի թիվ մեկ դափնեկիր:

Գևորգ Ղարիբջանյանը ծնվել է 1920 թ. մայիսի 5-ին Ալեքսանդրապոլում (Գյումրի): 1937-1941 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: Գևորգ Ղարիբջանյանը Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրերից կամավոր մեկնել է բանակ, երկու անգամ վիրավորվել ռազմաճակատում: 1940-ական թթ. վերջերից վարել է պատասխանատու կոմերտական, պետական և գիտական պաշտոններ: Եղել է ՀԼԿԵՄ կենտկոմի քարտուղար, ՀԿԿ Լենինականի քաղաքային կոմիտեի առաջին քարտուղար, ԽՍՀՄ ԿԿ առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի - ՀԿԿ Կենտկոմի առընթեր կուսակցության պատմության ինստիտուտի տնօրեն, ՀԽՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար և նախագահության անդամ, ՀՀ ԳԱԱ գիտական տեղեկատվության կենտրոնի տնօրեն:

Ղարիբջանյանը հայրենական պատմագիտության ակադեմիկոսներից էր: Մեծ է նրա գիտական վաստակը հայ ժողովրդի նոր և նորագույն շրջանների պատմության և մշակույթի, Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության և հայ-ռուսական հարաբերությունների կարևոր հիմնախնդիրների բացահայտման և ուսումնասիրման ասպարեզներում: Նրա գրչին են պատկանում 75 գիրք և գրքույկ, մոտ 400 գիտական աշխատություն և հրապարակախոսական հոդված:

Գևորգ Ղարիբջանյանը վախճանվել է 1999 թ. դեկտեմբերի 27-ին, Երևանում:

ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոն

«Հայրենականի հերոսամարտից մինչև Շուշիի հաղթանակ»



Մայիսի 4-ին Ամերիկայի հայկական համագումարի հայաստանյան գրասենյակում «Երիտասարդություն» հասարակական կազմակերպության հետ կազմակերպվել էր հանդիպում վետերանների և դարաբաղյան պատերազմի հերոս Արկադի Տեր-Թադևոսյանի՝ նույն ինքը Կոմունիստի հետ: Միջոցառումը կրում էր «Հանդիպում սերունդների հետ» խորագիրը: Վետերանների կոմիտեի նախագահ, պատմական գեղասպետ Զորան Դովհաննիսյանը մեծ ոգևորությամբ երիտասարդությանը պատմեց մեր ժողովրդի հերոսական անցյալի մասին և միաժամանակ երիտասարդներին կոչ արեց. «Մի՞թե և պահպանել հայրենիքը»: Վետերանների շարքերում կային վետերան կանայք՝ Ռոզալիա Աբգարյանը, Զո-

յա Եղիյանը: Նրանք նույնպես խոսեցին Հայրենական պատերազմին իրենց մասնակցության մասին, թե ինչպես, լսելով պատերազմի լուրը, առանց երկար մտածելու մեկնել են ռազմաճակատ: Նրանց պատմություններին միացան նաև ժողովուրդային, հեռուստատեսային, լրատվական հասարակությանը երիտասարդներին՝ սիրել և պահպանել հայրենիքը: Այս ջերմ մթնոլորտին ներկա Արկադի Թադևոսյանը շնորհակալություն հայտնեց ղեկավար ավագ սերնդին, խոսեց մեր արցունքալից հերոսամարտի, մասնավորապես Շուշիի ազատագրման մասին: Ներկա երիտասարդներին հետաքրքրող այն հարցին, թե ինչո՞ւ էր պայմանավորված մեր հաղթանակը, Արկադի Տեր-Թադևոսյանը պատասխանեց. «Դա մեր ազգի ոգու ուժից էր գալիս, և դա էր պատճառը, որ մենք թվաքանակով լինելով քիչ, հաղթանակ տոնեցինք»: Հանդիպումը անցավ շատ ջերմ մթնոլորտում, և վստահաբար կարելի էր ասել, որ հանդիպմանը ներկա երիտասարդները ներշնչված էին այն սուրբ գաղափարով, որ երբ հայրենիքին վտանգ է սպառնում, պետք է ազգովի ոտքի ելնել ու պաշտպանել հայրենին:

Մանուշակ ԹԱՎՐԻՉՅԱՆ

ՀՀ ԳՀՀ ԳԿՄԿ մագիստրատուրայի լրագրության բաժին

Հայաստանի և Բելառուսի Գիտությունների ազգային ակադեմիաների նախագահները ստորագրեցին համագործակցության պայմանագիր

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության ընդլայնված նիստում ստորագրվեց գիտական համագործակցության պայմանագիր՝ ՀՀ ԳԱԱ-ի և Բելառուսի Գիտությունների ազգային ակադեմիայի միջև: Պայմանագիրը ստորագրեցին ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը և Բելառուսի ԳԱԱ նախագահության նախագահ Միխայիլ Մյասնիկովիչը: Պայմանագրի ստորագրման արարողությանը մասնակցում էին Հայաստանում Բելառուսի դեսպանատունը, Բելառուսի ԳԱԱ պատվիրակությունը, ՀՀ ԳԱԱ ինստիտուտների տնօրենները:

ՀՀ նախագահը ընդունել է Բելառուսի ԳԱԱ նախագահության նախագահին

Նույն օրը ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը ընդունել է Բելառուսի Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նախագահ Միխայիլ Մյասնիկովիչին:

Ողջունելով հյուրին՝ նախագահ Սարգսյանն ասել է, որ հայ-բելառուսական գիտական կապերը լուրջ պատմություն ունեն. «Գիտական ոլորտում մեր երկու երկրների գիտությունների ակադեմիաների դեռևս խորհրդային տարիներին հաջող համագործակցության մասին հիշում ենք բոլորս: ԽՍՀՄ փլուզումից հետո, ցավոք, այդ կապերը խզվեցին, սակայն հուսով եմ, որ այժմ մենք համագործակցության նոր սկիզբ ենք նախաձեռնում», - ընդգծել է երկրի ղեկավարը:

Բելառուսի ԳԱԱ նախագահության նախագահ Մյասնիկովիչը նշել է, որ հո երկուսում Հայաստանի, հայ ժողովրդի հանդեպ շատ ջերմ վերաբերմունք կա: «Մեր ժողովուրդների միջև նաև ընդհանրություններ կան՝ մենք ամեն ինչ ստեղծում ենք սեփական ինտելեկտով, սեփական ուժերով ու համառ աշխատանքի շնորհիվ», - շեշտել է բելառուս գիտնականը:

Կողմերը մտքեր են փոխանակել երկու երկրներում գիտության զարգացման հեռանկարների մասին: Հայաստանի ու Բելառուսի ԳԱԱ ղեկավարները նշել են, որ ստորագրված փաստաթուղթը երկու երկրների գիտական շրջանակների համար փոխգործակցության նոր հնարավորություններ է ստեղծում:

ՀՀ նախագահի մամուլ գրասենյակ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԵՐԵՎԱՆՈՒՄ «ԲԻՕՖԱՐՄԱ 2010»

Մայիս 17-20 տեղի ունեցավ «ԲԻՕՖԱՐՄԱ 2010: Գիտությունից դեպի արտադրություն» երկրորդ միջազգային գիտաժողովը:

Գիտաժողովի բացումը տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ նախագահությունում:

Կազմակերպիչներն են՝ ՌԳԱ Պուշչինոյի հետազոտական կենտրոնը (Ռուսաստան), ՌԳԱ Մ. Մ. Շենյակինի և Յ. Ա. Օվչինիկովի անվան Բիոօրգանական քիմիայի ինստիտուտի փորձարարական բիոտեխնոլոգիական արտադրությունը (ՌԳԱ ԲԲԻ ՓԲԱ, Ռուսաստան), Առողջապահության նախարարություն Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձաքննական գիտական կենտրոնը (Հայաստան), ՀՀԳԱԱ Հր. Բունիպյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտը, GH BioQuenta Consulting e. U. (Ավստրիա), Ֆարմիտեխնոլոգիա (Ռուսաստան):


Գիտաժողովում քննարկվեցին բիոֆարմացուտիկայի ֆունդամենտալ հետազոտությունների, բիոֆարմապրեպարատների, նյութափոխանությունը խթանող կենսաբանական հավելումների, դեղամիջոցների որակի վերահսկման հատկությունների առանձնահատկությունների և այլ խնդիրներին վերաբերող հարցեր:

Մարշալ Բաղրամյանի անունով դպրոց Մոսկվայում

Մոսկվայի հարավարևելյան մասում գտնվող դպրոցներից մեկն այսպես կոչված Վախանյան Բաղրամյանի անունով:

Ռուսաստանում հրատարակվող հայկական «Երկրամաս» քերթի հաղորդմամբ՝ այդ դպրոցում կայացրել են քաղաքային իշխանությունները, հաշվի առնելով թիվ 481 դպրոցի մանկավարժական կոլեկտիվի առաջարկը:

Ուսուցիչների խոսքով՝ կրթական հաստատության անվանակոչումը թույլ կտա նոր մակարդակի բարձրացնել սովորողների հայրենասիրական ոգին:



ՀՀ ԳԱԱ ԱՐՏԱՍԱՀԱՏԱՆՅԱՆ ԱՆՈՒՍՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Ներկայացնում է ՀՀ ԳԱԱ սփյուռքի բաժինը

Սերգեյ ԱՅՎԱԶՅԱՆ

ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, պրոֆեսոր Սերգեյ Այվազյանի ողջ կենսագրությունը գիտության նվիրյալի փայլուն օրինակ է:



դոկտորական ատենախոսություն մաթեմատիկական կիրառական մասնագիտությամբ՝ «Вероятностно-статистическое моделирование социально-экономических процессов и некоторые проблемы многомерного статистического анализа»:

Ս.Այվազյանը շուրջ 100 գիտական աշխատանքների հեղինակ է, այդ թվում 8 մեծագործությունների, որոնք տպագրվել են ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Հոլանդիայում և այլուր: 1988-2001թթ. հրատարակել է երկու դասագիրք՝ «Կիրառական վիճակագրություն և էկոնոմետրիայի հիմունքներ», «Կիրառական վիճակագրությունը խնդիրներում և վարժություններում»:

Սերգեյ Այվազյանը աչքի ընկնող մանկավարժ է: Նա դասավանդում է մաթ իր մայր ԲՈՒՀ-ում՝ Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանում: Ս.Այվազյանի ղեկավարությամբ 20-ից ավելի գիտնականներ պաշտպանել են գիտական թեզեր:

Այսօր ևս Այվազյանը շարունակում է իր համագործակցությունը Հայաստանի գիտնականների վերապատրաստման գործում: Նա ղեկավարում է ԵՊՀ-ի մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի շրջանավարտ Արամ Հովհաննիսյանի, ով սովորում է միջպետական համաձայնագրով:

Սերգեյ Այվազյանի նախաձեռնությամբ և մասնակցությամբ Ռուս-հայկական համալսարանի հետ մշակվում է «Հայաստանի Հանրապետության մակրոէկոնոմետրիկական մոդելավորում» նախագծի տեխնիկական առաջադրանքի հիմնական դրույթները: Եվ, ընդհանրապես, Հայաստանում գտնվելու յուրաքանչյուր առիթ նա օգտագործում է գեկուցումներով և դասախոսություններով հանդես գալու համար, ինչպես Հայաստանի ԳԱԱ համակարգի ու ԲՈՒՀ-ական կազմակերպություններում, այնպես էլ Արցախի պետական համալսարանում, ինչը մեծ խթանիչ ուժ է հատկապես երիտասարդ գիտնականների համար:

Հաշվի առնելով նրա դասախոսական գործունեությունը 1978թ. նրան շնորհվեց պրոֆեսորի կոչում: Այվազյանը դասավանդել է մաթ արտերկրների համալսարաններում՝ Դիժոնի համալսարանի տնտեսա-մաթեմատիկական ինստիտուտում (Ֆրանսիա), Թագավորական Հոլովեի Լոնդոնի համալսարանում (Մեծ Բրիտանիա), Հելսինկիի կալիֆոռնիական պետական համալսարանում (ԱՄՆ) և այլն:

1986թ. Այվազյանը զբաղեցնում է Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի էկոնոմիկական մաթեմատիկական կենտրոնական ինստիտուտի գիտական փոխտնօրենի պաշտոնը: Նա «Էկոնոմիկա և մաթեմատիկական մեթոդներ» ամսագրի գլխավոր խմբագրի տեղակալն է: 1991թ. անդամակցում է միջազգային վիճակագրության ինստիտուտին, 1994-թվականից՝ Ամերիկյան վիճակագրության միությանը:

Հայազգի մեծանուն գիտնականը 1986թ. դարձել է ԽՍՀՄ Միևնախորհրդի խորհրդի մրցանակի դափնեկիր, մույն թվականին ստացել է Ֆրանսիայի վիճակագրների ազգային կոնգրեսի պատվավոր շքանշան, 1988թ.՝ Եվրոպական էկոնոմետրիկական կոնգրեսի պատվավոր շքանշան:

Հաշվի առնելով Սերգեյ Այվազյանի գիտական և մանկավարժական մեծ ավանդը, ինչպես նաև մայր հայրենիքի հետ սերտ կապերը, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան 2008 թվականին նրան ընտրել է ԳԱԱ արտասահմանյան անդամ: Արդեն երկու տարի է, ինչ ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Սերգեյ Այվազյանը մասնակցում է ԳԱԱ ընդհանուր ժողովներին և հանդես գալիս գիտական գեկուցումներով:

Գոհար ԻՄԿԱՆ-ԴԱՐՅԱՆ
պ.գ.թ., դոցենտ,
ՀՀ ԳԱԱ սփյուռքի բաժնի
գլխավոր տնօրեն

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՅ.

«... հայն իր պատմությունից բնավ չի սովորում»



Ժամանակը չէ՞ խոստովանել, որ հայոց պատմությունը մեզ մի հատիկ բան է սովորեցնում՝ այն, որ հայն իր պատմությունից բնավ չի սովորում:

Գիտական հոգեբանությունը վաղուց է ապացուցել, որ արեւմտյան տեսած և մեծ արհաւիրքների, ցնցումների ենթարկված ժողովուրդները, հատկապես փոքր ժողովուրդները, սկսում են տառապել հոգեկան հետքերից, որն արտահայտվում է պարտվողականության տարբեր դրսևորումների ձևով: Արդեմի ենթարկվածը, հոգեպես խիստ ուժասպառվելով, ամեն ինչ կորած է համարում, լքում է իր պատմական առաքելությունը,

կրավորաբար և հնազանդորեն համակերպվում իր վզին փաթաթված քաղաքական ճակատագրին: Նախ և առաջ նրան պատում է քերականության տանջալից զգացումը, որի պատճառով դառնում է քաղաքական հոռետես, մշակույթի տեսակետից՝ անստեղծագործ: Հոգեպես նա դառնում է անիշխան՝ ժխտելով ամեն մի արժեք, հեղինակություն, իշխանություն, դառնում է զզվելի անձնապաշտ, փոքրոգի ու խոքր հասարակությամբ և սկսում հետապնդել սուկ մեկ առօրեական նպատակ՝ իր սեփական հացն ու հանգիստը: Որպես «ուրացող» (պարտավորական), նա լքում է իր դիրքերը ողջ ճակատով: Իր գոյության պայքարը նա արտաքին ճակատից տեղափոխում է իր ներաշխարհը, որի հետևանքով ավելի է «կոտրվում», ուժասպառվում:

Սուրբ, հերոս, բարեգործ - սրանք անհեթեթություններ են մեր կյանքում, եթե միաժամանակ հայրենասեր և արի չեն: Եվ ի՞նչ է, չկան անտակալն ազգեր, բայց հայ տակալները կմնա անմրցելի: Զզվելի է եսասերը: Նա թշնամի է իր նմաններին, իր հասարակությամբ, մարդկությամբ: Նա ստանում է՝ առանց տարա: Նա անիշխանական է, որովհետև իրավունքներ

ունի առանց պարտականությունների: Նա գող է, տգրուկ, որովհետև ապրում է ուրիշների հաշվին: Իր հանցավոր ես-ի մեջ փակված, ինչպես խխունջը իր պատյանի մեջ, նա արհամարհում է և հեզմում այն ամենը, ինչ որ հենց այժմ անձնապես չի շահեցնում, չի պարարտացնում:

Ուր շահ, ուր լավ՝ այնտեղ հայրենիք: Մա է նրա շնական նշանաբանը:

Այլ պիտի լինե՞ր աշխարհը, եթե գոյություն չունենար այդ մարդաստիպ հրեշը՝ եսասերը: Դա է առաջին դասալիքը, դա է վախկոտը, փոքրոգին ու խարեբան: Դա է բարձրացնում անձնական կաշվի արժեքը, դա է պակասգրկում սրբությունները, իդեալները, հայրենիքը:

Ժողովրդի առաջին թշնամին է կազմակերպված միջակայությունը՝ համձին զանգվածների տգիտության և տկարության քվեներով ընտրված իշխանությունը:

Մեծ պաշտոններն առանց հոգեկան մեծության նման են կավե անդրիի՝ դրված ոսկե պատվանդանի վրա:

Գաղափարական առաջնորդների գործի շարունակվողները դարձան միջակ շեֆերը: Դաշնակցությունը դարձավ «շեֆական»

կուսակցություն, և, քանի որ «շեֆականությունը», հայտնի հոգեբանական օրենքների համաձայն, միշտ հանգեցնում է «փայփակության», դրանով Դաշնակցությունը կորցրեց իր գաղափարական և կազմակերպական միասնությունն ու միաձույլ բնութագիրը: Միասնական Դաշնակցությունը դադարեց գոյություն ունենալ, առաջացան Դաշնակցություններ, տեղի ունեցավ խոր պատակտում:

«Շեֆականությունը» միշտ ուղեկցվում է կարիերիզմով, շահամոլությամբ ու մանրահոգությամբ: «Շեֆականությունն» անկարող է գաղափարին տրվել ամբողջությամբ, անկարող է առաջացնել խանդավառություն, առանց որի անհնար է որևէ հեղափոխական գործ, նա թշնամի է տեսական խղճմտանքի, բնորոշ գծեր, որոնց բացակայության դեպքում ղեկավարությունը վերածվում է լուրջ ղեկավարության ծաղրանկարի: Այսպիսին դարձավ Դաշնակցությունը իր հիմնադիրների մահից հետո, այդպիսին նա դարձավ Հայաստանի Հանրապետության ժամանակ, այդպիսին է այժմ, երբ արդեն չի արդարացնում իր հեղափոխական, մարտական ու ազգային առերիքոտներից և ոչ մեկը:

ԿԼԻՄԵՆՏ ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ - 70

Մեր թերթի նախորդ համարում մենք հաղորդել ենք, որ Հայրենական մեծ պատերազմի պարմության ոլորտում ունեցած մեծ վաստակի համար և ծննդյան 70-ամյակի կապակցությամբ ՀՀ ԳԱԱ պարմության ինստիտուտի առաջարար գիտաշխատող, պարմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Հարությունյանը ապրիլի 20-ին պարգևատրվեց ՀՀ ԳԱԱ վաստակագրով: Պարգևի առթիվ ասված շնորհակալական խոսքում Կլիմենտ Հարությունյանն ասաց. «Իմ կարծիքով այսօր ոչ թե իմ աշխատանքն է գնահատվում, այլ հայ ժողովրդի մասնակցությունը Մեծ հայրենականին, որի փարեզիքը լինելու բախար է վիճակվել ինձ»:

Հայ ժողովրդի սխրանքի անխոնջ տարեգիրը



Կլիմենտ Ամասիայի Հարությունյանը ծնվել է 1940 թ. մայիսի 1-ին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան քաղաքում՝ շիկահողցի ծնողների ընտանիքում. հայրը եղել է դպրոցի տնօրեն, մայրը՝ բուժքույր: 1947-1957թթ. սովորել և ավարտել է Կապանի թիվ 2 միջնակարգ դպրոցը: Դպրոցն ավարտելուց հետո աշխատանքի է անցել Կապանի մեքենատրակտորային կայանում, ապա ընդունվել հայկական գյուղատնտեսական ինստիտուտի մեքենայացման ֆակուլտետը (սկզբում հեռակա, ապա՝ առկա բաժին): 1961-1966 թթ. սովորել և գերազանցությամբ ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետի պատմության բաժինը: Ինստիտուտում սովորելու տարիներին թղթակցել է ինստիտուտի «Մանկավարժ» թերթին, բարձր կուրսերում ղեկավարել հայոց պատմության ուսանողական գիտական ընկերության աշխատանքները: Ուսանելու տարիներին նա հանդես է եկել «Մեծ եղեռնը», «Հայ կամավորական շարժումը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին» հետաքրքիր, այն ժամանակվա համար շատ համարձակ զեկուցումներով, 1966 թ. ապրիլի 25-28-ին մասնակցել է Բաթումի մանկավարժական ինստիտուտի ուսանողական գիտական նստաշրջանին, կարդացել «Արևմտահայերի ազգային-ազատագրական շարժումը 1914-1916 թթ.» զեկուցումը: 1966 թ. սեպտեմբեր-1968 թ. դեկտեմբեր ամիսներին աշխատել է Հայաստանի նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվում որպես կրտսեր, ապա ավագ գիտաշ-

խատող, ծեռք բերել արխիվային փաստաթղթերի հետ աշխատելու փորձ, «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսում տպագրել է իր առաջին գիտական գործերը: Արխիվում աշխատելու տարիները զգալի չափով նպաստել են պատմաբան-գիտնականի ծավալման և կայացման գործընթացին: 1968 թ. ընդունվել է Հայաստանի Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի ասպիրանտուրա (արտադրությունից կտրված) և 1971 թ. հաջողությամբ ավարտել այն: Ավարտելուց հետո մինչև այսօր Կ. Ա. Հարությունյանն աշխատում է նույն ինստիտուտում սկզբում որպես կրտսեր, ապա՝ ավագ և առաջատար գիտաշխատող, իսկ 1994 թ. հունիսից՝ «Հայ ժողովրդի մասնակցությունը Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմներին» թեմատիկ խմբի ղեկավար: 1979թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1994թ.՝ դոկտորական ատենախոսություններ: Նա մասնագիտացել է Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության, հայկական ազգային գործաժպտությունների և զինվորական մամուլի պատմության, հայ մարշալների կենսագրությունների անհայտ էքերի լուսաբանման հիմնահարցերում: Կ. Ա. Հարությունյանը հրատարակել է 17 մենագրություն, մասնակցել արխիվային փաստաթղթերի ու նյութերի 4 ժողովածուի և «Հուշամատյան» հիմնական թանգիտարկի կազմման և խմբագրման աշխատանքներին: Գիտական հանդեսներում, ժողովածուներում և հանրագիտարանում տպագրել է 72 աշխատություն, միջազգային, հանրապետա-

կան, ակադեմիական և ինստիտուտային գիտաժողովներում հանդես եկել 22 զեկուցումներով:

Նրա հեղինակած գրքերի և հոդվածների մի զգալի մասը հրապարակվել է մեծ ռուսերեն: Բացի վերոհիշյալից Կ. Ա. Հարությունյանը խմբագրել է 24 և գրախոսել 12 գիրք: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է 2 թեկնածուական ատենախոսություն:

Նա ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի և ՀՀ պաշտպանության նախարարության ռազմապատմական թանգարանի գիտական խորհուրդների անդամ է: Նրա գիտական հայրենամակեր աշխատանքն ըստ արժանվույն է գնահատվել ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ Ռուսաստանի Դաշնությունում: 1989 թ. մայիսի 17-ին Կ. Ա. Հարությունյանը պարգևատրվել է ՀԽՍՀ ԳԱ գովեստագրով, որը նրան է հանձնել Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս, ՀԽՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը: Գիտական աշխատություններում և մամուլում հորինողային Միության մարշալ, կրկնակի հերոս Դ. Բաղդամյանի ծննդյան 100-ամյակը լուսաբանելու համար Կ. Ա. Հարությունյանը 1997 թ. նոյեմբերի 15-ին պարգևատրվել է «Մարշալ Բաղդամյան» մեդալով:

Ռազմահայրենասիրական գրականություն ստեղծելու բնագավառում կատարած շնորհակալ գործի համար Ռուսաստանի Դաշնության մունիցիպալ ակադեմիայի նախագահության 2004 թ. սեպտեմբերի 6-ի թիվ 1 որոշմամբ Կ. Ա. Հարությունյանը պարգևատրվել է «Մ. Ա. Շոլոխովի 100-ամյակի առթիվ» հուշամեդալով: Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին հիմնահարցը բազմակողմանի և նորահայտ արխիվային փաստերի հիման վրա լուսաբանելու համար ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի՝ 2005 թ. մայիսի 9-ի հրամանագրով Կ. Հարությունյանը պարգևատրվել է «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Հայդանակի 60 տարին» հոբելյանական մեդալով: Բացի այդ Կ. Ա. Հարությունյանը պարգևատրվել է մի շարք պատվոգրերով:

Համահեղինակությամբ տպագրված նրա վերջին գրքի շնորհանդեսը ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցավ օրերս (հաղորդումն այդ մասին կարդացեք 1-ին էջում):

Ակադեմիկոս Ա.ԳԱԼՈՅԱՆԸ մասնակցեց «Ցիտոկիններ և բորբոքումներ» թեմայով համաստեղիկյան գիտաժողովին

2010 թ. սկզբներին ԱՄՆ-ի Սան Դիեգո քաղաքում տեղի ունեցավ քաղցկեղի ինստիտուտի կազմակերպված համաստեղիկյան գիտաժողով՝ «Ցիտոկիններ և բորբոքումներ» թեմայով: Գիտաժողովի աշխատանքները ղեկավարում էր խառը խմուռով պրոֆ. Զ. Օպենհեյմը: Ակադեմիկոս Արմեն Գալոյանը հրավիրված էր պրոֆ. Զ. Օպենհեյմի կողմից՝ դասախոսելու հետևյալ թեմայով՝ «Հիպոթալամուսի նեյրոէնդոկրին ցիտոկինների քիմիան և կենսաբանությունը, քերականիկ հետազոտությունը»:

Գիտաժողովի մասնակիցներն էին ԱՄՆ-ի խառը խմուռովները, որոնց զեկույցները հիմնականում նվիրված էին պարզաբանելու ցիտոկինների դերը բազմաթիվ հիվանդությունների պաթոգենեզի և ցիտոկինների միջոցով մի շարք հիվանդությունների ժամանակ:

Պրոֆ. Զ. Օպենհեյմի ծրագրային դասախոսությունը նվիրված էր, այսպես կոչված, «Ալարմինգերին», որոնք սպիտակուցներ են, առաջանում են լեյկոցիտներում, կերատոցիտներում, էպիթելային բջիջներում և այլն, մեծ առաջ են գալիս արագ, բազմաթիվ պաթոգեն ազդակների ներքո, որպես ինտերմիսանիչ՝ պաշտպանելու օրգանիզմը տարբեր հիվանդություններից: Այս նյութերի միջոցով ստեղծվում են բազմաթիվ բուժիչ դեղամիջոցներ:

Ակադեմիկոս Ա. Գալոյանի զեկույցումը նվիրված էր իր և աշխատակիցների կողմից հայտնաբերած ինտերմիսան մոլեկուլների ցիտոկիններին, որոնց քիմիական կառուցվածքները լրիվ պարզվել և սինթեզվել են Ա. Գալոյանի լաբորատորիայում, ուսումնասիրվել են նրանց ազդեցությունները, որպես հզոր միջոց՝ ինտերմիսան, ինֆեկցիոն, ներվային և ուռուցքային հիվանդությունների բուժման համար: Այսինքն, հայտնաբերված են կենտրոնական նյարդային համակարգում (ուղեղում) սինթեզվող ցիտոկինները, որոնք, ըստ Ա. Գալոյանի, համարվում են օրգանիզմի պաշտպանության/իմունոպրոպալիզ/ հզոր միջոց: Տեղի ունեցած լուրջ քննարկումներ Ա. Գալոյանի և Զ. Օպենհեյմի կողմից հայտնաբերած ինտերմիսանիցների շուրջը:

Ա. Գալոյանը հարց բարձրացրեց այն մասին, որ օրգանիզմի պաշտպանական մեխանիզմների տարբեր սթրեսների ժամանակ չի կարելի բաժանել պերիֆերիկ և կենտրոնական համակարգերը: Բժշկության և ինտերմիսանիզմի զարգացման համար անհրաժեշտ է ծավալել համատեղ հետազոտություններ՝ հասկանալու նրանց հիմնական մեխանիզմները, որոնք ակադեմիկոս Ա. Գալոյանի ստացած տվյալների համաձայն, կազմակերպվում կամ համաձայնվում են ուղեղից անջատված ցիտոկինների միջոցով:

Քննարկման արդյունքում որոշվեց, որ պետք է ծավալել համատեղ գիտահետազոտական աշխատանքներ քաղցկեղի ինստիտուտի ինտերմիսան բաժնի և ՀՀ ԳԱԱ կենսաքիմիայի ինստիտուտի նեյրոէնդոկրին բաժնի (ղեկավար Ա. Գալոյան) հետ միասին: Ի դեպ, համագործակցությունը սկիզբ է առել, երբ ակադ. Ա. Գալոյանը հրավիրվել էր քաղցկեղի ինստիտուտ՝ կարդալու դասախոսություն (պրոֆ. Զ. Օպենհեյմի հրավերով):

ԱՄՆ-ի գիտական հասարակությունը մեկ անգամ ևս ծանոթացավ Հայաստանում կատարվող հիմնական հետազոտություններին՝ նեյրոէնդոկրինային համակարգի ներքին և արտաքին ինտերմիսանի մեխանիզմների և ժամանակակից գիտական հայտնաբերումների (ղեկավար Ա. Գալոյան) հետ միասին: Ի դեպ, համագործակցությունը սկիզբ է առել, երբ ակադ. Ա. Գալոյանը հրավիրվել էր քաղցկեղի ինստիտուտ՝ կարդալու դասախոսություն (պրոֆ. Զ. Օպենհեյմի հրավերով):

Տպագրվածը դառնում է իրականություն

«Գիտություն» թերթը հաճախ է անդրադառնում էներգետիկայի խնդիրներին, մեծ տեղ հատկացնելով հատկապես էներգախնայողական նոր տեխնոլոգիաների օգտագործմանը մեր հանրապետությունում: Այդ խնդրին է նվիրված մեծ ծանաչված գիտնական, տեխնիկական գիտությունների թեկնածու Ստեփան Պապիկյանի հոդվածը՝ «Կառուցելու նոր տիպի ՋԷԿ» վերտառությամբ, որը տպագրվել է «Գիտություն» թերթում: Հեղինակը հիմնավորում էր երևան քաղաքում շոգեգազային շրջափուլով աշխատող նոր տիպի, արդիական սարքավորումներով կառավարված էլեկտրակայանի անհրաժեշտությունը: Ստ. Պապիկյանը այս բնագավառի հետ կապված բազմիցս գիտական զեկույցներում էր կարդացել միջազգային և հանրապետական գիտաժողովներում, տպագրել է բազմաթիվ գիտական հոդվածներ: Անհրաժեշտ է նշել նաև, որ նա այս բնագավառի երախտավորներից է: Ուրախալի է, որ թերթում տպագրվածը տարիներ անց դառնում է իրականություն: Դրա վաղ վկայությունն է Երևանի ՋԷԿ-ի հարևանությամբ վերջերս շահագործման հանձնված շոգեգազային շրջափուլով աշխատող կայանը: Այն միաժամանակ կարող է արտադրել և՛ էլեկտրական, և՛ ջերմային էներգիա, լուծել տարաբնույթ էներգետիկ և շրջակա միջավայրի պահպանության հարցեր:

2010 թ. հունվարի 12-ին Հայիթի կղզում տեղի ունեցած $M=7.0$ մագնիտուդի երկրաշարժը, որին հետևեցին ևս մի քանի կրկնվող հարվածներ ($M=5.9$, $M=5.3$), գտնվում էր 10 կմ խորության վրա և 60 կմ դեպի Հայիթիի Պորտ-օ-Պրենուս մայրաքաղաքից հարավ:

Երկրաշարժը, ըստ էության, լրիվ ոչնչացրեց մայրաքաղաքը, փլատակների տակ մնացին 270.0 հազարից ավելի մարդ: Հիմնահատակ կործանվեցին պառլամենտի, գլխավոր տաճարի շենքերը, քաղաքի հիվանդանոցները, դպրոցները, բանտը, որից փախուստի դիմեցին 1000-ից ավելի բանտարկյալներ:

250.0 հազարից ավելի մարդ ստացել էր մարմնական տարբեր աստիճանի վնասվածք, 3.0 միլիոնից ավելի մարդ մնացել էր անօթևան, առանց հացի, ջրի և էլեկտրաէներգիայի: Անհնարին էր ստանալ բժշկական օգնություն:

Հայիթիի երկրաշարժը և սեյսմիկ անվտանգության խնդիրները Հայկական Լեռնաշխարհում

վելի մարդ մնացել էր անօթևան, առանց հացի, ջրի և էլեկտրաէներգիայի: Անհնարին էր ստանալ բժշկական օգնություն:

Ուղարկված միջազգային հումանիտար օգնությունը, որ տրամադրել էին աշխարհի բազմաթիվ երկրներ, օդանավակայանների շարքից դուրս գալու պատճառով չէին կարողանում ժամանակին ընդունել բեռները:

Ամբողջ երկրով մեկ մոլեգնել էր զոդությունը, քաղաքներում դիակապությունը, որոնք դուրս էին եկել երկրի իշխանությունների վերահսկողությունից, երկրին սպառնում էր համաճարակը, որն իր հերթին կարող էր խլել միլիոնավոր մարդկանց կյանք:

Ինչո՞ւ են այսպես մանրամասն անդրադառնում Հայիթիի երկրաշարժին:

Սեկ պարզ պատճառով միայն: Աղետը, որը տեղի ունեցավ Հայիթիում, ուներ նույն պատկերը, ինչ որ տեղի ունեցավ Սպիտակում 1988 թ. դեկտեմբերի 7-ին, երբ աշխարհի բոլոր պետությունները օգնության ձեռք մեկնեցին հայ ժողովրդին՝ Խորհրդային Միության բոլոր հանրապետությունները, հատկապես Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան, Նորվեգիան, Ճապոնիան, Հարավսլավիան, Անգլիան և այլ երկրներ:

Սպիտակի երկրաշարժից անցել է 22 տարի: Նոր սերունդը դրա մասին չգիտի կամ չի հիշում: Գուցե դա հասկանալի է, քանզի նա ականատես չի եղել աղետին, բայց որ այն մոռացության է մատնել մեր սերունդը, այդ արդեն անցնելի է:

Անցնելի է, որովհետև աղետալի երկրաշարժերի սպառնալիքը մեր երկրից չի վերացել:

Հայաստանը գտնվում է «Միջերկրածովյան» սեյսմակտիվ գոտում: Եթե թվարկենք ուժեղ և կործանարար երկրաշարժերը, որոնք տեղի են ունեցել Հայաստանի տարածքում, ապա կհամոզվենք, որ այդ աղետը միշտ էլ կախված է մեր գլխին: 1679 թ.՝ Գառնի, 1840 թ.՝ Արարատ: 1926, 1929 թթ.՝ Եփրակ, 1931, 1968 թթ.՝ Ջանգեզուր, 1937 թ.՝ Երևան և այլն: Բնակամաքար հարց է առաջանում ի՞նչ անել:

ԿԱՆԱԳՈՒՇԱԿԵՆԼ ԵՐԿՐԱՇԱՐՄԸ: Հարցը շատ դժվար է և բարդ, քանզի կանխագուշակել երկրաշարժը՝ նշանակում է հստակ պատասխանել 3 հարցի: Որտե՞ղ, ե՞րբ և ինչպիսի՞ ուժգնությամբ տեղի կունենա սպասվող երկրաշարժը:

Այսօր այս հարցը լուծված չէ և չի ստացել միարժեք պատասխան, բայց կան մի քանի օրինակ, 1931 և 1968 թթ. Ջանգեզուրում տեղի ունեցած երկրաշարժերը և նրանց էպիկենտրոնները գտնվում էին նույն տեղում: Ունենին էպիկենտրոնային 9 կմ երկարությամբ խզման գոտի, որը տարածվում էր Գեղի գետի հոսանքն ի վեր:

Այս երկրաշարժը ունի երկարաժամկետ, միջին և կարճաժամկետ նախանշաններ: Ահա այն 3 նախանշանները, որոնք աշխատում են հստակ, կարող են ապագայում ապահովել Ջանգեզուրում սպասվող երկրաշարժի կանխագուշակման խնդիրը, եթե, իհարկե, այն սիստեմատիկաբար ուսումնասիրվի:

Բայց ո՞վ պետք է ուսումնասիրի. սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությունը, թե՞ նրա հարավային դեպարտամենտը: Իսկ ովքե՞ր են այն մասնագետները, որոնք պետք է ապահովեն և հսկեն այդ ուսումնասիրությունը: Կարծում ենք, սեյսմիկ ծառայությունը այսօր խիստ կարիք ունի վերակառուցման և առաջին հերթին՝ կադրային:

Հայտնի է, որ Արաբական սալի տեղաշարժերը ուսումնասիրելու նպատակով ամերիկացիները Արաբական թերակղզում երկար ժամանակ է, ինչ տեղադրել

են 2 ռադիոտելեսկոպ: Արաբական սալը Հայկական Լեռնաշխարհին և մասնավորապես Հայաստանին, սեղմում է միակողմանի:

Այս շարժումները, մենք կարող ենք գրանցել Գառնիի երկրաֆիզիկական դիտարանում տեղադրված դեֆորմոգրաֆների և թեքաչափերի օգնությամբ (իհարկե, եթե նրանք աշխատեն)՝ միաժամանակ օգտագործելով Բյուրականի աստղադիտարանի ռադիոտելեսկոպները: Տեղին է նշել, որ Բյուրականի աստղադիտարանի տարածքում 1 մ տելեսկոպի հարևանությամբ աստղադիտարանի տնօրինության և մեր քանդերով կառուցվել է թվային սեյսմիկ կայան:

Գառնիի երկրաֆիզիկական դիտարանում է տեղադր-

ված նաև ԱՄՆ-ի սեյսմիկ ծառայության «Գլոբալ» ցանցի JRJS համակարգը:

Բնական է, որ այս բոլորը հնարավորություն կտան Հայաստանի տարածքում, Ռուսաստանի Դաշնության երկրի ֆիզիկայի ինստիտուտի, ԱՄՆ-ի սեյսմիկ ծառայության, Հայաստանի սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության, ԵՊՀ-ի, ԳԱԱ-ի և այլ կազմակերպությունների հետ համատեղ կազմակերպել երկրաֆիզիկական և սեյսմաբանական մոնիթորինգ՝ միաժամանակ պատրաստելով երիտասարդ մասնագետների, որոնք կփոխարինեն մեզ:

Այս աշխատանքները հնարավորություն կտան զբաղվել նաև երկրաշարժերի մեխանիզմների և հաճախության տարբեր տիրույթների (միջուկային գաղտնի պայթեցումների) ուսումնասիրմամբ, միաժամանակ օգտակար կլինեն երկրաշարժերի նախանշանների որոնման համար: Մենք չենք կասկածում, որ այս հարցում շահագրգռված են նաև ամերիկյան և ռուս մասնագետները:

Հայաստանի տարածքում, սեյսմիկ կայանները, մասնավորապես «Ռեգիոնալ», հիմնականում տեղադրված են մեկ ուղղությամբ (հյուսիսից հարավ) և շատ հաճախ, եթե ոչ ընդհանրապես, այս վիճակը հնարավորություն է չի տալիս մեզ որոշելու, ինչպես Հայաստանում, այնպես էլ հարևան պետություններում, մասնավորապես Թուրքիայում և նրան հարող տարածքներում տեղի ունեցող ուժեղ երկրաշարժերի օջախների մեխանիզմները (Վան, Կարս, Էրզրում, Իզմիր, Արարատ և այլն), որոնք նույնպես պոտենցիալ վտանգ են ներկայացնում Հայաստանի Հանրապետության համար:

Մեր կարծիքով, կարելի է բանակցություններ վարել Թուրքիայի իշխանությունների հետ: Արարատ Լեռան շրջակայքում մեր կողմից տեղադրել ժամանակակից մեկ թվային ռադիոսեյսմիկ կայան, և մեկ հատ էլ թուրքական՝ մեր տարածքում, ասենք Գառնիի երկրաֆիզի-

կոնոլոգիայի հետ, գտնում ենք նպատակահարմար, որ մարդկատարանները, քաղաքապետարանները իրենց կառույցներում ունենան սեյսմակայուն շինարարության 1 մասնագետի հաստիք, որը հնարավորություն կտա վերահսկելու նոր կառուցվող շենքերի որակը, կազմելու վարային շենքերի ցանկը, նկուղային հարկերի կամ տանիքների և ընդհանրապես բնակելի շենքերում ինքնագործունեությամբ զբաղվող «վայ» բնակիչների հարցերով: Ջարմանում ես, երբ, օրինակ, վերստուգիչ հանձնաժողովի նախագահ Իշխան Ջաքարյանը հայտարարում է, որ աղետի գոտում, մասնավորապես Գյումրիում նոր կառուցված կամ վերանորոգված դպրոցների շինարարության որակը չի համապատասխանում



սեյսմակայուն շինարարության նորմերին:

Եվ ի՞նչ է առաջարկում Ի. Ջաքարյանը: Նշված շինարարական կազմակերպություններին, որպես պատիժ, 2-3 տարով զրկել որևէ շինարարական մրցույթի (տեղեղների) մասնակցելու իրավունքից: Ուրիշ ոչինչ: Իսկ եթե երկրաշարժ լինի, և այդ կառույցները նորից քանդվել են, ինչպես Սպիտակի երկրաշարժի ժամանակ, և երեխաները նորից մնան փլատակների տակ:

Եվ շինարարները, ինչպես պատասխանատվություն չկրեցին Սպիտակի երկրաշարժի ժամանակ, այդպես էլ չեն պատժվի նաև հիմա:

1991 թվականից ՀՀ-ում գործում է սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությունը: Նախ, ի՞նչ «ազգային», եթե այն ոչ մի իրավունք չունի օրենսդրական դաշտում, որպեսզի վերահսկի կամ արգելի անորակ կամ անօրինական շինարարական կառույցները:


Մի հարցի մասին ևս.

Հայաստանում բավականին լայն տարածում ունեն երիտասարդ հրաբուխները: Սեյսմահետախուզական աշխատանքների միջոցով հնարավոր է ի հայտ բերել մագմատիկ օջախներ, որոնք բազայի վրա կարելի է կազմակերպել գոլորշու վրա աշխատող էլեկտրակայաններ: Նմանատիպ աշխատանքների մեծ փորձ ունեն ամերիկյան մասնագետները Հավայան կղզիներում:

Հայաստանի տարածքի մեծ մասը ծածկված է բազալտներով և տուֆերով, որոնց տակ են գտնվում ցածր արագություն ունեցող (խոսքը սեյսմիկ ալիքների մասին է) նստվածքային ապարները:

Համեմատության կարգով ասենք, որ Սիբիրում հավերժական սառած շերտը մոտ է երկրի մակերեսին և նույնպես էկրանի դեր է կատարում: Այստեղ օգնության կարող է գալ մեր ռուս կոլեգաների փորձը: Գուցե պետք է մտածել այս ուղղությամբ և մշակել մեթոդիկա, որը հնարավորություն կտա լուծել այս հարցը Հայաստանում սեյսմահետախուզական աշխատանքներ կատարելու ժամանակ, հաշվի առնելով, որ էներգետիկայի նախարարության սեյսմատոմոնիթինգի ինստիտուտը ունի սեյսմահետախուզական սարք: Եվ վերջապես՝ թույլ տվեք հարցնել՝ էներգետիկայի նախարար պր-ն Մովսիսյանին, ինչո՞ւ վարացնել այդ ինստիտուտը, եթե այն ժամանակին ստեղծվել է մեծ դժվարությամբ:

Լեոնիդ ՀԱՆՎԵՐԴՅԱՆ
Երկրաբանական գիտությունների դոկտոր



**Պայքար ծերացման դեմ.
ահա սա է գիտնականի կոչումը**

Լրացավ 33 զԱՍ 3.Խ. Բուհիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի հասակային կենսաքիմիայի լաբորատորիայի վարիչ, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Ապրիկյանի 80 տարին:

Գուրգեն Ապրիկյանը ծնվել է 33 Նոյեմբերյանի շրջանի Բերդավան գյուղում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 1948 թ. ընդունվել է Երևանի պետական բժշկական ինստիտուտ: Գերազանց առաջադիմության համար նրան շնորհվել է անվանակալ: Ստալինյան թռչակ:

Գիտահետազոտական աշխատանքով սկսել է զբաղվել ռուսանողական տարիներից՝ անվանի կենսաքիմիկոս Դ. Բուճիաթյանի ղեկավարությամբ:

1954 թ. ավարտելով ինստիտուտը՝ նա 4 տարի տեղամասային հիվանդանոցի վարիչ է աշխատել Ամասիայի շրջանի Գյուլիբուլախ (այժմ՝ Յայակերտ) գյուղում։ Գյուլական հիվանդանոցի պայմաններում նա ստեղծել է կենսաքիմիական լաբորատորիա՝ գիտափնտազոտական աշխատանքներ կատարելու համար։

1963 թվականին Ապրիկյանը ՀՀ ԳԱԱ կենսա-
քիմիայի ինստիտուտում պաշտպանում է թեկնա-
ծուական ատենախոսություն:

Ապրիլյանը Հայաստանում առաջին է հետազոտություններ պսեխ ծերացման ընթացքում կենսաքիմիական պրոցեսների կարգավորման հարցերի ոլորտում, որոնց արդյունքները 1972 թ. ամփոփվել են նրա դոկտորական ատենախոսության մեջ՝ բարձր զնահատականի արժանալով ժամանակի նշանավոր ծերաբաններ Վ. Նիկիտինի և Վ. Ֆրոլկիսի կողմից:

1973 թ. Ապրիլյանը Կենսաքիմիայի ինստիտուտում կազմակերպում է հասակային կենսաքիմիայի՝ փորձարարական ծերաբանության լաբորատորիա, որի ղեկավարն է մինչև օրս: Նրա աշխատանքները լայն ճանաչում են գտել կենսաքիմիայի և ծերաբանության ասպարեզում: Նա առաջինն է ցույց տվել ուղեղին յուրահատուկ ացետիլասպարազինաթթվի դերը ուղեղը էներգիայով ապահովելու և նյարդային հաղորդականության կարգավորման մեջ: Նա ցույց է տվել նորմալ պայմաններում գլուխամտղեհիդրոգենազային ուղու արդյունավետությունը ամոնիակառաջացման մեջ, առաջին անգամ բացահայտել նյարդահաղորդիչ ամինաթթուների կլանման, արտազատման և դրանց կարգավորման առանձնահատկությունները նյարդային վերջույթներում, նեյրոնների և գլխիվ բջիջների հարստացված ֆրակցիաներում ծերացման ընթացքում: Պարզվել է, որ գլխիվ բջիջները, պահպանելով բազմացման կարողությունը ծերացման ընթացքում մասամբ իրենց վրա են վերցնում նեյրոնների ֆունկցիան: Ապրիլյանի աշխատանքներով ցույց է տրվել, որ չնայած ծերացման ընթացքում նյութափոխանակության ընդհանուր թուլացման, դեռևս պահպանվում է դրա կարգավորման հնարավորությունը:

սաքիմիայի ինստիտուտի տնօրենի գիտության գծով տեղակալի պաշտոնը, եղել է ինստիտուտին կից դոկտորական ատենախոսությունների պաշտպանության գիտական խորհրդի փոխնախագահ ԵՊՀ-ի կենսաբանական ֆակուլտետի կենսաքիմիայի ավարտական քննական հանձնաժողովի և ֆակուլտետին կից ատենախոսությունների պաշտպանության գիտական խորհրդի անդամ, «Նեյտրոքիմիա» (Մոսկվա), «Проблемы старения и долголетия» (Կիև) ամսագրերի խմբագրական կոլեգիայի անդամ, ԽՍՀՄ Ծերաբանների և ծերաբույժների համամիութենական ընկերության նախագահության կենտրոնական խորհրդի, ԽՍՀՄ ԳԱ նեյտրոքիմիայի մասնաճյուղի, բժշկական գիտությունների ակադեմիայի ծերաբանության գիտական խորհրդի, ծերաբանների միջազգային ընկերության, կենսաքիմիկոսների եվրոպական ընկերության, Բնական բժշկության միջազգային ակադեմիայի և ՌԴ Բնական գիտությունների ակադեմիայի անդամ:

Ապրիլյանը զեկուցումներով հանդես է եկել ԽՍՀՄ և միջազգային (Անգլիա, Շվեդիա, Չեխոսլովակիա, Իտալիա, Յուգոսլավիա, ճապոնիա, Ինդոնեզիա, ԱՄՆ, Գերմանիայի Կորեա, Ուկրաինա, ՌԴ) կենսաաբիոթիակայն և ծերաբանական համազգումարներում և կոնֆերանսներում: 1976թ. վեց ամիս

գտնվել է գիտական գործուղման մեջ Շվեդիայում:

Նա Հայաստանում ծերաբանության հիմնադիրն է: Կազմակերպել է Անդրկովկասի ծերաբանների առաջին՝ երևանյան կոնֆերանսը: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են 16 թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ՝ նվիրված հասակային կենսաքիմիայի և ծերաբանության հարցերին: Ապրիկյանը կենսաքիմիայի և ծերաբանության արդիական խնդիրներին նվիրված 160 գիտական հոդվածի հեղինակ է, որոնց հրատարակվել են տեղական և միջազգային ամսագրերում:

Նա ցույց է տվել, որ հնուց ի վեր Հայաստանում հայտնի սպիտակ լուշտակի արձատի պատրաստուկները զգալիորեն երկարացնում են կյանքի տևողությունը, և բացահայտել այդ երևույթի մոլեկուլա-կենսաքիմիական մեխանիզմները, որի համար ստացել է ՌԴ արտոնագիր: Նա առաջարկում է այդ պրեպարատն օգտագործել որպես սննդային հավելում՝ առողջությունն ամրապնդելու և կյանքի տևողությունը երկարացնելու նպատակով:

2005 թ. առաջին անգամ հայոց լեզվով լույս տեսավ Ապրիլյանի հիմնարար աշխատությունը՝ «Շերաբանություն. առողջության ամրապնդման և երկարակեցության գաղտնիքները», որում արտացոլված են գիտության համաշխարհային և իր դեկավարած լաբորատորիայի երկարամյա հետազոտությունների արդյունքները: Աշխատանքում ներառված են նաև նրա հետազոտությունները Հայաստանի տարբեր շրջանների երկարակյացների առողջության և կենցաղի մասին: Ճապոնացի ծերաբան պրոֆ. Կ. Մորիշիտայի վկայմամբ հայ երկարակյացները իրենց առողջությամբ դրականորեն տարբերվում են հարևան հանրապետությունների երկարակյացներից:

Այժմ նրա ղեկավարած լաբորատորիան ուսումնասիրում է լյարդի հիվանդությունների և դրանցից առաջացող բարդությունների ժամանակ ազդտային փոխանակության խանգարումների կենսաքիմիական մեխանիզմները և զբաղվում դրանք բուժման և կանխարգելման միջոցների մշակմամբ: Այդ ուղղությամբ արդեն ստացվել են հուսալի արդյունքներ:

Կենսաքմիայի ինստիտուտի կոլեկտիվը և «Հայաստանի կենսաբանական հանդես» խմբագրությունը սրտանց շնորհավորում են Գուրգեն Վարդևանի Ապրիլյանի 80 - ամյակը և ցանկանում քաջամողություն և հետագա գիտական նվաճումներ:

Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀՀ ԳԱՍ Հ. Խ. Բուհիստորիկ անվան
Կենսաբանական ինստիտուտի տնօրեն, Կենս.
գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Ժ. ՊԱՐՈՆՅԱՆ
Կենս. գիտ. թեկնածու, ախպ գիտ.
աշխատող

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

Ռաֆայել Համբարձումյանի «Հանգանակ հայ ինքնութեան» գիրքը: Թատերախաղը ներկայացնում է Հայկ Նահապետից մինչև Խակեղար ընկած ժամանակահատվածում գործած մեր ժողովրդի հավերժական սրբաբայությունների մտքերն ու պատգամները, որոնք գեղարվեստական երկի մեջ գետեղված են անմախաղեպա ամբողջականությամբ: Հեղինակը դրանք քաղել է մեր ճշխարասպաստում պատմիչների մատչյալներից՝ պատմահայր Մովսես Խորենացուց մինչև Ստեփանոս Օրբելյան:

Այդ պատճառով բառերախա-
ղը բացառիկ նշանակություն ունի
նոր սերնդին ազգային ճշմարիտ
գաղափարներով զինավորելու և
հայրենապաշտությամբ օժտելու
համար:

Հեղինակը հիմնվել է հայ ժողովրդի մեծագուրծ առաջնորդների



ու զաղափարախոս առաքյալների
 մտքերի վրա՝ Հայկ Նահապետից
 մինչև Ս. Տրդատ Մեծ ու Լևոն Մե-
 ծագործ, Ս. Գրիգոր Նարեկացուց
 և Ս. Ներսես Շնորհալուց մինչև
 Գարեգին Նժդեհ:

ԿԱՐԾԻՔ

**ԹԵՐԻ ՄՍԱԳՈՐԾ, ՈՋ ԼՐԻՎ ԴԵՐՃԱԿ,
ԱՆԿԱՊԱՐ ՂԱՉՆԱԿԱԽԱՐ,
ԿԻՍԱՊ-ԱՊՈՊ ԶԱԽԱՆԱ և
ԳԻՊՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ**

Բացի վերջինից, մնացածը մտացածին են. գոյություն չունեն: Ոչ ոք չի ասում թերի մագործ, դերձակի թեկնածու կամ անկատար վարսավիր: Ասում են մագործ, դերձակ և վարսավիր: Սակայն զարմանալիորեն ասում են՝ գիտությունների թեկնածու: «Մի խենթ քարը գցեց հորի մեջ, հազար խելոջ չկարողացան այն հանել»: Գիտնական դառնալու համար մի սանդղուղջը դարձավ երկու... Առաջին աստիճանով բարձրանալիս ձեռք էր բերվում գիտությունների թեկնածուի աստիճան՝ դոցենտի կոչումով, իսկ երկրորդով՝ դոկտորի աստիճան՝ մեծ մասամբ պրոֆեսորի կոչումով:

Աշխարհի քաղաքակիրթ կոչված երկրների մեծ մասում դիսերտացիան պաշտպանելուց հետո ստանում են դոկտորի աստիճան՝ պրոֆեսորի կոչումով՝ առանց միջնորդավորված թեկնածուական աստիճանի կամ դոցենտի կոչման:

Օտարամոլությունը ես դեմ եմ. հատկապես այն զագրելի, գռեհիկ և տգետ օտարամոլությանը, որն այսօր տիրում է հանրապետությանը: Նույն: Կարելի է վերցնել այն միտքն ու երևույթը, որն ավելի տրամաբանական է, այն առարկայականը, որի կիրառությունն ավելի եկամտաբեր է կամ խնայողական, ավելի հարմարավետ է: Եվ ընդհակառակը. քարոզել ու տարածել արտասահմանում այն հայրենականը, որն առավելություններ ունի դրսում եղածի համեմատ: Մեր հայտնագործությունը, երևույթը, արտադրանքը և այլն:

Ինչո՞ւ ընկճել միջազգային գիտաժողովներին մասնակցող այն գիտության թեկնածուին, որը շատ ավելի բանիմաց է, քան արտասահմանցի գործընկերները, որոնք նրա վրա նայում են որպես կիսաաղքատ գիտնականի՝ գիտության թեկնածուի..., առանց ըմբռնելու, որ այդ թեկնածուն կարող է լինել հաճաքել կամ տաղանդավոր մի անձ...

Ըստ իս՝ գիտական աստիճանի նոր ձևին անցնելը պետք է ընթանա առանց քաջքուկ հարուցող հանգամանքների, ինչպես աշխատությունների քանակը դիսերտացիայի պաշտպանությունից առաջ և հետո, աշխատատեղն ու պաշտոնը, տարիքը և այլն...: Այսինքն, անցումը պետք է կատարվի ավտոմատ կարգով, որն էլ տեղիք չի տա անազնվության և կասկածների:

Հասմիկ ԺԱՄԿՈՉՅԱՆ

Հայաստանի երեխաների 26 տոկոսն աղքատ է


ՀՀ Ազգային ժողովի և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի 2009 թ. հուլիսի 7-ին ստորագրված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում Աժ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը և UNICEF-ը մայիսի 21-ին կազմակերպել էին «Մանկական աղքատությունը Հայաստանում» թեմայով ընդլայնված քննարկում: Քննարկումներին մասնակցում էին Աժ պատգամավորներ, ՀՀ կառավարության, միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հիմնական զեկուցողն էր Նյու Յորքի համալսարանի պրոֆեսոր Ջոնաթան Բրեդշոուն, ում ղեկավարությամբ «Մանկական աղքատությունը Հայաստանում» թեմայով զեկույց էր պատրաստվել:

Հայաստանում երեխաների 26 տոկոսն աղքատ է, որից 3 տոկոսը ապրում է ծայրահեղ աղքատ: 2004 թվականից որոշակի առաջընթաց է արձանագրվել մանկական աղքատության ցուցանիշների նվազեցման գործում 38 տոկոսից հասնելով 26-ի: Ըստ բանախոսի՝ երեխայի աղքատ լինելու ռիսկն ավելի բարձր է, եթե նա ապրում է բազմազավակ ընտանիքում, ծնողները միջնակարգ կամ ավելի ցածր կրթություն ունեն, ծնողները կամ չափաիսս անդամները գործազուրկ են, եթե ընտանիքում կան հաշմանդամ երեխաներ կամ ծնողները ամուսնալուծված են: Հայաստանում հաշմանդամ երեխաները բոլոր աղքատ երեխաների 50 տոկոսն են կազմում:

ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՐԵԿԱՄԸ

Յարուսլավ Ռոմանովիչ Դաշկևիչ



Լվով քաղաքից տխուր լուր ստացվեց: Կյանքից հեռացել է մեր ժողովրդի լավագույն քաղաքական, հայագետ, Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի Մ. Ս. Գրուշևսկու անվան Ռուսաստանի հնագրագիտության և աղբյուրագիտության ինստիտուտի Լվովի բաժանմունքի ղեկավար, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յարուսլավ Ռոմանովիչ Դաշկևիչը: Նրա բազմաթիվ աշխատությունները, մենագրությունները, հոդվածները, հրապարակումները միջով և են Ռուսաստանի պատմության քիչ ուսումնասիրված կամ անհայտ մնացած էջերին, հարկան երկրներն ու ժողովուրդներին հետ Ռուսաստանի ունեցած քաղաքական, ամենատարածված մշակութային հարաբերություններին: Նա վիթխարի աշխատանք է տարել Ռուսաստանի պատմագիտության, աղբյուրագիտության, կնիքագիտության, մատենագիտության, քարտեզագիտության, պատմական աշխարհագրության, հնագրագիտության, դիպլոմատիկայի, հարկան երկրների և ժողովուրդների հետ Ռուսաստանի ունեցած դարավոր հարաբերությունների հետազոտման ասպարեզում:

Հատկապես մեծ է նրա վաստակը Ռուսաստանում և Լեհաստանում հաստատված հայ գաղութների պատմության ուսումնասիրման գործում: Չնայած խանգարվել շատ հանգամանքների՝ նա կարողացել է հրատարակել ավելի քան 1.500 գիտական հոդվածներ, մենագրություններ, գրախառնություններ, սկզբնաղբյուրների ժողովածուներ և այլ գործեր: Նա տիրապետում էր մի քանի օտար լեզուների և իր աշխատությունների մի զգալի մասը շարադրել է Ռուսաստանում, ռուսերեն, լեհերեն և ֆրանսերեն լեզուներով:

Համագործակցելով Հայաստանի Գիտությունների ակադեմիայի ակադեմիայի Պատմության ինստիտուտի և Մաշտոցի անվան Մատենադարանի գիտնականների հետ՝ Յա. Դաշկևիչը իր աշխատություններում հիմնավորապես անդրադարձել է հայ գաղութների պատմության կենտրոն շատ խնդիրների և իր հեղինակավոր խաչքննադատական մասին:

Յա. Դաշկևիչը ծնվել է Լվովում 1926 թ. դեկտեմբերի 13-ին: Նրա հայրը՝ Ռոման Դաշկևիչը, սերում էր իրեն Ռուսաստանի ակադեմիայի ինստիտուտից, Ռուսաստանի ակադեմիայի քանակի գեներալ-լեյտենանտ էր: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո նա արտագաղթել է մինչև կյանքի վերջն ապրել է Ավստրիայում: Մայրը Ռուսաստանում ճանաչված ակադեմիկոս-գինվորական գործիչ էր, որը հետագայում զբաղվում էր գիտական աշխատանքով: Հրատարակել է 75 գիտական աշխատություն: 1949 թ. նա ձերբակալվել է մինչև 1956 թ. գտնվել է կարանավայրերում: Հետագայում նա լիովին արդարացվել է:

Յա. Դաշկևիչը 1949 թ. գերազանցությամբ ավարտ

աել է Լվովի համալսարանի բանասիրական ֆակուլտետը և աշխատանքի անցել Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի գրադարանի ձեռագրերի բաժնում, քայքայ շատ չանցած նրան մույնպես ձերբակալում են և ՄՄՀՄ ակադեմիայի անվտանգության կոմիտեի հետակա որոշմամբ դատապարտում 10 տարվա ազատազրկման: Նա կարճ ժամանակ է եղել շուրջ 6 տարի: Ազատվելուց հետո տաղանդավոր, ստեղծագործական ուժերով և մեծ հմտություններով լեզուն Յա. Դաշկևիչը երկար տարիներ գործազուրկ է եղել և գտնվել պետական անվտանգության օրգանների մշտական հսկողության տակ: Եվ դա շարունակվել է մինչև 1969 թ.: Նրա կյանքի այդ ծանր ժամանակաշրջանում Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտը և Մաշտոցի անվան Մատենադարանը հատուկ ուշադրության են արժանացրել նրան: Պատմության ինստիտուտը, ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի խմբագրությամբ, լույս է բնծայել «Ռուսաստանի հայկական գաղութները XV-XIX դարերի սկզբնաղբյուրների և գրականության մեջ» նրա մեծարժեք մենագրությունը:

Այդ թեմայով նրա թեկնածուական դիսերտացիան պաշտպանության է դրվել Պատմության ինստիտուտի գիտական խորհրդում: Յա. Դաշկևիչի նկատմամբ քաղաքական վերաբերմունք ունեցող Մատենադարանի հանգուցյալ տնօրեն, ակադեմիկոս Լևոն Խաչիկյանը: «Բանքեր Մատենադարանի» էջերում նա մեկը մյուսի հետևից հրատարակել է Յա. Դաշկևիչի արժեքավոր աշխատությունները հայ և Ռուսաստանի դարավոր կապերի մասին: Դրանց թվում էր նաև նրա ընդարձակ հոդվածը հայաստան-դիպլոմատիկ գրված մեծաքանակ մյուսերի հեղինակների ազգային պատկանելության մասին: Կիևի մի երկուստար գիտաշխատակից, ձգտելով դուր գալ իր դազալի կնոջ ազգականներին, փորձում էր դիպաղալիս դարձած լեհաստանից դուրս բերել որպես հայերի կողմից քրիստոնյա դարձված դիպլոմատ (պոլով-ցիններ) և դարերի ընթացքում նրանց ստեղծած գրական ու գիտական վաստակի վերադրել դազալիների նախնիները հռչակված այդ դիպլոմատներին: Յա. Դաշկևիչը գիտության հետ առնչություն չունեցող այդ «ռեալության» դեմ հանդես եկավ մի աշխատությամբ, որով հիմնավորապես հերքեց պատմական իրողությունը լեհալայրաբար այդ վայր «ռեալության» մասին վարժանքները, այնպես որ վերջինս հարկադրված եղավ հրաժարվել դրանցից:

1995 թ. Յա. Դաշկևիչը պաշտոնապես արդարացվել է 1991 թ. ընդունված «Ռուսաստանում քաղաքական հալածանքների գոհերի արդարացման մասին» օրենքի հիման վրա: Իր աշխատությունները հրատարակելու համար գիտնականը հարկադրված է եղել օգտագործել ավելի քան 20 ծածկանուններ:

Յա. Դաշկևիչն ի թիվս այլ արժեքավոր հայագիտական աշխատությունների՝ Նյու Յորքում և Լվովում լույս է բնծայել «Հայաստանը և Ռուսաստան» երկհատորանի գիրքը՝ անգլերեն լեզվով: Նրա վաստակը մեծ է հայ-Ռուսաստանի գիտական համագործակցության ասպարեզում, և այդ պատճառով նա վայելում էր հայ գիտական հասարակայնության բացառիկ հարգանքը: 2001 թ. նրան շնորհվել էր Ռուսաստանի գիտության վաստակավոր գործչի կոչում: Նա Լվովի պատվավոր քաղաքացի էր: Մինչ այդ նա արագապատվել էր Մ. Սահակ և Մ. Մաշտոց շքանշանով, ընտրվել Հայաստանի Գիտությունների ակադեմիայի ակադեմիայի պատվավոր դոկտոր: Յա. Դաշկևիչին շնորհվել էր նաև Երևանի պետական համալսարանի պատվավոր դոկտորի աստիճան:

Յա. Դաշկևիչը ընտրվել էր Ռուսաստանի ակադեմիայի (ԱՄՆ) պատվո անդամ: Նրա մահը մեծ կորուստ է ոչ միայն Ռուսաստանի գիտության, այլև հայագիտության համար:

Վարդան ԳՐԻԳՈՐՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր



Խորհրդային ավիացիայի հիմնադիր զորավոր են կենտրոնական անտիդիդրոդինամիկայի ինստիտուտում (ԿԱԴԻ): Իհարկե, մինչև հեղափոխությունը և Ռուսաստանում ավիացիայով զբաղվում էին, սակայն ման հզոր գիտական կառույցն այլ մակարդակի հասցրեց ավիացիոն գիտության զարգացումը: Խորհրդային ավիացիայի հայր պրոֆեսոր Նիկոլայ

ժուկովսկին Մոսկվայի բարձրագույն տեխնիկական ուսումնարանում դասախոսելու ընթացքում ամենաշնորհալի պատանիներից հավաքեց առաջին ավիացիոն խմբակը, որն էլ դարձավ Խորհրդային ավիացիայի «մարգարեների» թիմը: Ժուկովսկու առաջին ակումբից էր Գուրգեն Մուսիկյանցը, որը հետագայում դարձավ ԿԱԴԻ-ի խոշոր գիտնական, ավիացիոն բացառիկ սարքավորումների ստեղծող: Ծնվել է Երևանում

ԱԵՐՈՂԻՆԱՄԻԿԱՅԻ ՀՍԿԱՆ

1895 թ. մայիսի 28-ին, գինեգործ Մկրտիչ Մուսիկյանցի ընտանիքում: 1913 թ. ավարտելով Երևանի գիմնազիան՝ ընդունվում է Մոսկվայի բարձրագույն տեխնիկական ուսումնարանը, որտեղ էլ շատ շուտ հայտնվում է ժուկովսկու տեսադաշտում: Օդային պտուտակների մասնագետն ու հաշվարկների մեթոդիկայի գործում հաջողությունների համար շուտով դարձավ պրոֆեսորի ամենամոտիկ բարեկամներից: Իսկ երբ նրան զորակոչեցին բանակ, դժվար չեղավ ծառայությունը «Իլյա Մուրոմեց»-ների եկադրիկայում և ռազմական գերատեսչության օդային փորձարկումների լաբորատորիայում: Այստեղ Մուսիկյանցն իր սիրելի ուսուցչի և մյուս աշակերտների հետ պատրաստում է առաջին անտիդինամիկ խողովակը ինքնաթիռների փորձարկումների համար: Ապագա պրոֆեսորների ու ակադեմիկոսների այդ փոքրիկ խումբն աշխատում էր օր ու գիշեր: Շուտով նրանց երազանքն իրականացավ: 1918 թ. դեկտեմբերի 1-ին ստեղծվեց ԿԱԴԻ-ն, որի ընդամենը 38 աշխատակիցների թվում էին Մուսիկյանցը, Իվան ու Եվգենի Պողոսյան եղբայրները, Տուպոլևը և այլք: Շատ կարճ ժամանակում ԿԱԴԻ-ն հաղթահարեց կայացման փուլը և արդեն կատարում էր պետական պատվերներ, ստեղծվում էին տարբեր սարքավորումներ, մշակվում ինքնաթիռների տեսակներ: Շուտով Մուսիկյանցը մի քանի այլ աշխատակիցների հետ ստեղծում է աշխարհում ամենամեծ անտիդինամիկ խողովակը՝ «S-I-S-II»-ը: Սա հենց այն ժամանակն էր, երբ ԽՍՀՄ-ը ստեղծում է սպառազինություն էր ընդունում առաջին հայրենական արտադրության ինքնաթիռները: 1928 թ. Մուսիկյանցը գործուղվում է Գերմանիա, Ֆրանսիա և Իտալիա: Վերադառնալուց հետո ԿԱԴԻ-ի գիտատեսազոտական աշխատանքի կազմակերպման մի քանի առաջարկ է անում: Շուտով մշակվում է ինստիտուտի խողովակի փորձարարական անտիդինամիկայի ղեկավարի տեղակալ: Դետո գործուղվում է ԱՄՆ, իսկ վերադառնալուց հետո զբաղվում է այլ խողովակի ստեղծմամբ՝ փոքր, սակայն ավելի ճշգրիտ: Մինչև Գերմանական մեծ պատերազմի սկսվելը, ԿԱԴԻ-ում ստեղծվում է աշխարհի լավագույն անտիդինամիկ կշեռքը, որի ստեղծման վրա արդեն մի քանի տարի աշխատում էր հայագիտական գիտնականը: 1940 թ. նա ստանում է անտիդինամիկայի ոլորտի իր ուսուցչի անվան լավագույն մրցանակը, որը մինչև օրս ամենահեղինակավորն է ավիացիոն գիտնականների շրջանում: Նույն տարում Գուրգեն Մուսիկյանցը ստանում է դոկտորի գիտական կոչում: Մեկ տարի անց, մինչև պատերազմի սկսվելը, նա անձամբ ընտրեց Չապլինի անվան ինստիտուտի հիմնադրման վայրը, մասնակցեց արագընթաց թռիչքների փորձարկման համար ստեղծվող խողովակի մասնագետն աշխատանքներին: Երբ վաղեմի ընկերը՝ Տուպոլևը, ստեղծում էր աշխարհի առաջին գերձայնային մարդատար ինքնաթիռը, Մուսիկյանցին վստահեց համապատասխան հսկա կշեռքների ստեղծումը: Մուսիկյանցի մասնագիտական գործունեությունը միշտ մնում էր ճանաչված ավիացիոն տեխնոլոգիայի անունների սովորում, սակայն առանց նրա և նրա ման մասնագետների, հնարավոր չէր օդ. բարձրացնել զարմանալի տվյալներ ունեցող ոչ մի ինքնաթիռ: Միաժամանակ նա դասավանդում էր իր վարպետի անունը կրող ավիացիոն ակադեմիայում: Պետական մրցանակի դափնեկիր, գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ, դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Մուսիկյանցը վախճանվել է Մոսկվայում 1967թ.:

Վերջապես կրեդադորվի Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցու խաչը

Այդ մասին տեղեկացրել էր «Հյուրիները»։ «Վերջապես թույլատրվեց տեղադրել Վանա լճի հայոց աշխարհի համար պատմական մշակութային ժառանգություն ունեցող Աղթամարի (Աղթամար) եկեղեցու խաչը: «Էֆես» հիմնադրամի շնորհակալությամբ, պատասխանելով «Աթլաս» համալսարանի հարցերին, Թուրքիայի մշակույթի և զբոսաշրջության նախարար Էրթուրալ Գյումայն ասաց, որ Վանի բնության և մշակութային արժեքների պահպանման խորհուրդը որոշում է ընդունել, որ տեղադրվի Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու խաչը: Այսպիսով, Թուրքիայի Հանրապետության պատմության մեջ առաջին անգամ թույլատրվում է խաչ տեղադրել այդպիսի կարևորություն ունեցող եկեղեցիներից մեկում:

Մերայ Բ պատմաբանի վաստակը շատ պատմաբանի մեծ փառքերից է հա-

մայնի ամենադիպագր մեկնալսացուցիչը համարվող Թուրքիայի հայերի հոգևոր խորհրդի նախագահ Արսլան արք. Աթեյանը մշեց, որ այդ մասին իրենք իրազեկված չեն, ոչ մի գրություն դեռ չեն ստացել, ավելացնելով. «Իհարկե, խաչի տեղադրման լուրը մեզ այնքան ռադիկալ չէր, որքան եկեղեցում պատարագի մատուցման լուրը էր»:

Նախարար Գյումայն նաև ասաց, որ սա նոր տեղեկություն է, այդ իսկ պատճառով հրապարակելու առիթ չի ունեցել, ասլա և ընդգծեց. «Վանի մշակութային արժեքների պահպանման խորհուրդն այդ որոշումը նոր է ընդունել: Նույնիսկ շատ նոր: Թեև Վանի մահան-



գապետը խնդրել էր, որ ես հայտարարեմ այդ մասին, քայքայ Համառամն այնչեղի, ես այնտեղ մտնելու ասել եմ: Թուրքիայում առաջին անգամ եմ ասում: Եկեղեցու խաչը կտե-

ղադրվի սեպտեմբերին մայիստեղծվող ժամերգությունից առաջ»:

Խաչի տեղադրումն ինքնին արարողություն է ենթադրում: Դրա առնչությամբ հոգևոր խորհրդի նախագահ Աթեյանը մշեց. «Եկեղեցին շուրջ մեկ դար փակ է մնացել: 19-րդ դարի 90-ական թվականներին եղել է կաթոլիկոսի նստավայր: Որպես կանոն, երբ խաչ են տեղադրում եկեղեցու գմբեթին, որևէ հոգևորական գմբեթ է քարքարում, որ մյուսումնով օծի խաչը: Զամի որ մենք չենք օծել եկեղեցին, առաջի խաչի օծման կարիք չկա»:

Ի դեպ, 2007-ին վերականգնումից հետո Թուրքիայի հայերը Մուրթ Խաչ եկեղեցու խաչը տեղադրելու պահանջով դիմել էին Մերայ Բ պատմաբանին, որն էլ խաչը պատվիրել է Վան էր ուղարկել: Մակայն տեղադրելու թույլտվության քաղաքական պատճառով խաչը դրվել էր պահեստում:

Հ. Չ...

Ժամանակակից ֆիզիկան ծանր կորուստ կրեց



Կյանքի 66-րդ տարում վախճանվեց մեր ժամանակների ակամավոր ֆիզիկոսներից մեկը՝ համաշխարհային համբավի գիտնական, Ռուսաստանի Դաշնության Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ, ՌԴ Գիտությունների ակադեմիայի նախագահության անդամ, Դուբնայի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի տնօրեն Ալեքսեյ Սիսակյանը:

Նա արժանի զավակն էր մեծահամբավ կենսաքիմիկոս, ակադեմիկոս Նորայր Սիսակյանի, որից էլ ժառանգել էր գիտությանը անմնացորդ ծառայելու անուրանալի տաղանդը:

Ալեքսեյ Սիսակյանը ծնվել է 1944 թվականին, Մոսկվայում: 1968 թվականին, ավարտելով Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ֆիզիկական ֆակուլտետը, նա աշխատանքի անցավ Դուբնայի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի լաբորատորիայում: Ժամանակի ընթացքում Ալեքսեյ Սիսակյանը դարձավ տեսական և մաթեմատիկական ֆիզիկայի ոլորտի ռուսական ամենահեղինակավոր գիտնականներից մեկը:

Նրա գիտական գործունեության հիմնական ուղղությունը եղել է տարրական մասնիկների ֆիզիկան, դաշտի քվանտային տեսության մոտավոր մեթոդները և հավասարումները, ոչ տրիվիալ երկրաչափությամբ, համաչափությամբ և տոպոլոգիայով համակարգերի քվանտացման հիմնախնդիրը, ուժեղ փոխազդեցությունների ֆիզիկան՝ բարձր ջերմաստիճանների և խտությունների դեպքում:

Նրա նախաձեռնությամբ և աջակցությամբ Դուբնայում իրականացվել

են բազմաթիվ համարձակ ծրագրեր: Մասնավորապես պետք է առանձնացնել NICA խոշորամասշտաբ նախագիծը, որն իրականացվեց միացյալ ինստիտուտի արագացուցիչի հիմքի վրա՝ միջուկային նյութում կրիտիկական երևույթների հետազոտման նպատակով:

Ալեքսեյ Սիսակյանը մասնակցել է ԱԵԲԻ-ի Մեծ հաղորդային կոլլաբորացիայի ստեղծման նախագծերին:

Ակադեմիկոս Սիսակյանի նվիրական երազանքն էր 30 կիլոմետր երկարությամբ վիթխարի գծային կոլլաբորացիայի ստեղծումը: Կոլլաբորացիայի խնդիրն էր լինելու բացահայտել և մեկ հանելուկ, որը հանգիստ չի տալիս ֆիզիկոսներին. ի՞նչ է մութ (սև) մատերիան: Ալեքսեյ Սիսակյանը ապացուցում էր, որ այդ հսկա արագացուցիչը պետք է կառուցել Դուբնայում:

Ալեքսեյ Սիսակյանը բազմաթիվ գիտական աշխատությունների հեղինակ է, արտասահմանյան շատ համալսարանների, ակադեմիաների, գիտական հաստատությունների պատվավոր անդամ:

Լայն ճանաչում են ստացել ակադեմիկոս Սիսակյանի ղեկավարած գիտական խմբի աշխատանքները՝ նվիրված տարրական մասնիկների ֆիզիկայի ամենահորատապ խնդիրներից մեկին՝ դաշտի քվանտային տեսության ոչ պերտուրբատիվ մեթոդների մշակմանը և կիրառմանը: Նրա ղեկավարությամբ կատարվել են նոր հեռանկարային հետազոտություններ, որոնք ուղղված են ծանր իոններում և միջուկային նյութում խառը կվարկ-ադրոնային ֆազաների կազմավորման պրոցեսների որոնմանը:

Գիտական ակտիվ գործունեությունը ակադեմիկոս Սիսակյանը միշտ համատեղել է մանկավարժական և գիտական գործունեության հետ:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է 15 ատենախոսություն, նա ամբիոններ է ղեկավարել Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտում, Մոսկվայի ինժեներաֆիզիկական ինստիտուտում, Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան համալսարանի պրոֆեսոր էր, «Դուբնա» տեսական ֆիզիկայի Միջազգային ինստիտուտի փոխպրեզիդենտ և ամբիոնի վարիչ, Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի «Միմետրիա և ինտեգրվող համակարգեր» գիտական սեմինարի ղեկավար և այլն:

Ալեքսեյ Սիսակյանը («ПИСЬМА В ЭЧ» համընթաց գլխավոր խմբագիրն էր, «Տարրական մասնիկների և ատոմի միջուկի ֆիզիկա» ամսագրի գլխավոր խմբագրի տեղակալը, ընդգրկված էր մի շարք գիտական հրատարակչությունների խմբագրական կոլեգիաներում, միջազգային գիտաժողովների և կոնֆե-

րանսների մասնագիտացված խորհուրդների անդամ էր, տարրական մասնիկների ֆիզիկայի միջազգային խոշոր գիտաժողովների և դպրոցների կազմակերպիչ:

1989-2005 թվականներին, լինելով Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի փոխտնօրեն, իսկ 2006 թվականից՝ տնօրեն, ակադեմիկոս Ալեքսեյ Սիսակյանը անգնահատելի ավանդ է ունեցել ինստիտուտի ներուժի պահպանման և մեծացման, նրա գիտական հեռանկարների ճշգրտման, ինստիտուտի գիտական և արտադրական բազայի կատարելագործման, ինստիտուտը որպես միջուկային ֆիզիկայի միջազգային բաց կենտրոն դարձնելու, ազգային և համաշխարհային գիտական և կրթական կենտրոնների հետ լայն համագործակցության զարգացման, բարձրորակ գիտական կադրերի պատրաստման ուղղությամբ:

Ալեքսեյ Սիսակյանը Ռուսաստանի Դաշնության Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ է ընտրվել 2006 թվականին, իսկ 2008-ին՝ ակադեմիայի իսկական անդամ և Ռուսաստանի Դաշնության Գիտությունների ակադեմիայի նախագահության անդամ:

Լինելով Ռուսաստանի Դաշնության Գիտաքաղաքների միության նախագահ, ակտիվորեն մասնակցել է գիտաքաղաքների կայացմանը, նա Ռուսաստանի Դաշնության Պաշտպանության կոմիտեի նախագահի տեղակալն էր:

Ալեքսեյ Սիսակյանը պարգևատրվել է Ռուսաստանի և արտասահմանյան երկրների 10 շքանշաններով և մեդալներով, այդ թվում ՌԴ Պատվո և Բարեկամության շքանշաններով:

Դպրոցական տարիներից նրա հրապարակված աշխատանքները են: Նա մի քանի հրաշալի բանաստեղծական ժողովածուների հեղինակ էր:

Ալեքսեյ Նորայրի Սիսակյանին ճանաչողները միշտ զարմանում էին նրա անհուն նվիրվածությամբ գիտությանը, գործին, կամքի զարմանալի ուժի զուգակցումը մտերիմների, բարեկամների, աշխատանքային ընկերների և ընդհանրապես մարդկանց նկատմամբ անսահման բարության և զգաստության հետ: Նա իսկական մարդ էր, ճշմարիտ հայրենասեր և խոշորագույն գիտնական:

Ալեքսեյ Նորայրի Սիսակյանի անժամանակ մահը անդառնալի կորուստ էր համաշխարհային ֆիզիկայի, Ռուսաստանի գիտության և նաև Հայաստանի գիտության ու ժողովրդի համար, որովհետև մենք կորցրինք մեր մեծ հայրենակցին:


ՀՀ ԳԱԱ ակադեմիայի
նախագահություն

Հրաշագործ դափնին

Դափնու տերևները որպես համեմունք հայտնի են դեռևս հին ժամանակներից: Սակայն քչերին է հայտնի, որ բացառիկ հատկանիշներով դափնու ծառ կարելի է աճեցնել և տանը: Այն ոչ միայն օդը հագեցնում է հաճելի բույրով և առողջարար ֆիտոնիցիդներով, այլև մաքրում է այն: Դափնին հեշտությամբ հարմարվում է տան պայմաններին՝ լույսի պակաս, չոր օդ, փոքր ծաղկաման: Մեզ լավ հայտնի է, որ ավանդաբար օլիմպիական խաղերի հաղթողների ուսերին դնում են դափնու պսակ: Անգամ անցյալում և ներկայումս որոշ մեդալների վրա ստացված հատուկ նվաճումների համար, պատկերում են դափնու տերևներ:

Անհիշելի ժամանակներից դափնին համարվել է սուրբ բույս: Ըստ հին փիլիսոփաների և գիտնականների՝ դափնուն պաշտպանում են աստվածները: Ըստ նրանց՝ այդ է պատճառը, որ կայծակը դափնու ծառին չի հարվածում: Իսկ հռոմեական կայսր Տիբերիուսը մորիկի կամ ամպրոպի ժամանակ թաքցնում էր ոչ թե պալատում, այլ դափնու սաղարթի տակ:

Կարմիր արոսենու նման (рябина) Իտալիայում տան առջև հաճախ դափնու ծառ են տնկում՝ ի նշան պաշտպանության: Իսկ որոշ երկրներում էլ հին ժամանակներում ընդունված է եղել բարձի տակ դնել դափնու տերևներ՝ իմաստուն երազներ տեսնելու համար: Հին ժամանակներում այս հրաշք բուսատեսակն օգտագործվել է նաև բժշկության մեջ: Օրինակ, նրա լուծույթով բուժում էին ռևմատիզմ, ջղաձգություն, շաքարախտ, հոգաբորբ (արտրիտ), մաշկային հիվանդություններ, բերանաբորբ (ստոմատիտ), անգամ ամրապնդում նյարդային համակարգը:



Մեր ժամանակներում էլ ապացուցվել է, որ դափնին իր եթերայուղերի և միկրոէլեմենտների շնորհիվ բարձրացնում է օրգանիզմի դիմադրողականությունը, բուժում մրսածություն և վարակներ: Այն տնային տնտեսության մեջ էլ անփոխարինելի է, քանի որ դափնու տերևները ոչ միայն հաճելի համ են տալիս սննդամթերքին, այլև վերջինս պաշտպանում վաղ փչացումից:

Դափնին նաև արդյունավետ միջոց է միջատների (օրինակ՝ ցեց) և խավարասերների դեմ պայքարելիս:

Ձեր անողորմ շատար

Քաղցկեղի բուժման դեղամիջոցը գտնվում է ուրելիքի մեջ

Ուռուցքների զարգացումն արգելակում է պեկտինը

Գիտնականները գտել են հակաքաղցկեղային մի նյութ, որ իրենց մեջ պարունակում են մրգերի, բանջարեղենի և հատապտուղների շատ տեսակներ: Վաղուցվանից է հայտնի, որ նրանք, ովքեր միրգ, բանջարեղեն և հատապտուղ շատ են օգտագործում, հազվադեպ են հիվանդանում քաղցկեղով: Վերջերս գիտնականները այդ հայտնի ճշմարտությունը ավելի ուշադիր ուսումնասիրեցին:

Առողջարար մարմեղա

Բանջարեղենի և մրգերի մեջ պարունակվող հակաքաղցկեղային կարևոր նյութերը կենսաֆլավոնոիդներն են: Ապացուցված է, որ նրանք ակտիվ կերպով արգելակում են ուռուցքների աճն ու զարգացումը:

Սակայն այս անգամ խոսվելու է մեկ այլ՝ ոչ պակաս կարևոր նյութի՝ պեկտինի մասին:

Բժիշկներին հայտնի է, որ պեկտինը արգելակում է աղիների խցանումը, կապակցում է խոլեստերինը, բուժավոր նյութերը և ծանր մետաղները՝ թույլ չտալով, որ դրանք օրգանիզմ թափանցեն:

Հրուշակագործներին և սննդի մյուս աշխատողներին պեկտինը քաջաձանթ է որպես դեղորայքային նյութ: Այն օգտագործվում է մուրաբաների, ջեմերի, մարմեղաների, պատեղների, կաթնամթերքների պատրաստման ժամանակ:

Անգլիայի սննդի ինստիտուտի գիտնականները պարզել են, որ պեկտինը իր մեջ պարունակում է հատուկ նյութ, որը կարևոր արգելիչ է դեր է կատարում քաղցկեղի առաջացման և զարգացման ընթացքում: Հույս կա, որ ապագայում հնարավոր կլինի ստեղծել պեկտին պարունակող դեղորայք:

Գ ի յ ու թ յ ու լ

Գլխավոր խմբագիր՝
Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14: Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Սպորազրկված է պապարության՝ 26.05.2010 թ.:

"ТИТУЛОН" ("Hayka")
gazeta HAH PA